ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 56

«26» 06 2020 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի N 10 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 54 հրամանով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ բաժնի 21-րդ գլխի 79-րդ կետի «Դատախազության դատախազ 10» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 9» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 20» բառերը՝ «Ընդամենը 19» բառերով:

2) 3-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 107» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 106» բառերով,

3) 5-րդ բաժնի 34-րդ գլխի 129-րդ կետի «Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ 3» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ 4», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 4» բառերը՝ «Ընդամենը՝ 5» բառերով,

4) 5-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 86»*** բառերը փոխարինել ***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 87»*** բառերով,

5) 6-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը՝ 107»*** բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը՝ 106»*** բառերով, իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 86»*** բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 87»*** բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ